

Երեսփոխաններ Շաբաթ օր Սահմանադրական խորհուրդին ներկայացուցին դիմում մը՝ հակասահմանադրական եւ չեղեալ հռչակել թի 430/2 օրէնքը, որուն հիմամբ, Կեդրոնական Գրաստանն սօտ յատուկ հաշիւ մը կը բացուի պետութեան պարտքերու վճարումին համար:

Խորհրդարանի նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնի, նախկին վարչապետ Օմար Քարամէ եւ երեսփոխաններ Ճորճ Գասարճի, Նայիա Մուսաւատ, Մորիս Տատէլ, Մուսթաֆա Սաստ, Մոհամէտ Սաֆարի, Մոհամէտ Քապար, Նամթալա Սալի Նասէր, Անթուան Ղանիլ եւ Ալի Ամմար իրենց դիմումին մէջ դիտել տուին, որ յիշեալ օրէնքը խոտոր կը համեմատի սահմանադրութեան 82րդէն մինչեւ 86րդ յօդուածներուն տրամադրութիւններուն, գործադիր իշխանութեան կը շնորհ օրէնսդիր իրաւաստութիւն, կ'անտեսէ պետական ելեմտութի սկզբունքային հիմքերը, պետութեան էլեմտական կառոյցին կը սպառնայ, պետական գանձարկի տասնամեակներու հասոյթները պատահող կը դարձնէ պարտատէրերու ձեռքերուն մէջ եւ ոտնակոխ կ'ընէ պետութեան գերիշխանութեան սկզբունքը:

## ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ

### ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ ԶԵԽԻԱ ԵՒ ՍԼՈՎԱՔԻԱ

Նախագահ զօր. էմիլ Լահուտ Երեւանի օր պիտի սկսի Չեխիա եւ Սլովակիա պաշտօնական այցելութեան մը, ընկերակցութեամբ մեծաթիւ պատուիրակութեան մը: Նախագահ Լահուտ Շաբաթ օր ընդունեց Լիբանանի մէջ գործող սուրիական ուժերու հրամանատար զօր. Իպրահիմ Սաֆիին, որուն Լիբանանի մէջ պաշտօնավարութիւնը աւարտած է: Նախագահ Լահուտ բարձր գնահատեց զօր. Սաֆիի Լիբանանի համար ի գործ դրած ճիգերն ու սուրիական եւ լիբանանեան բանակներու սերտ գործակցութիւնը, որուն շնորհիւ ամբարշտական քաղաքացիական խաղաղութիւնն ու կայունութիւնը եւ ուժի ազդակ դարձան իսրայէլեան ոտնձգութիւններուն դիմաց:

Նախագահ Լահուտ յաջողութիւն մաղթեց զօր. Սաֆիի եւ զայն պարգեւատրեց սպայից կարգի մայրիկներու շքանշանով: Զօր. Սաֆի շնորհակալութիւն յայտնեց նախագահ Լահուտի եւ զրուստեց երկու բանակներուն արդիւնաւէտ գործակցութիւնը: Ան վստահութիւն յայտնեց, որ նախագահ Լահուտի ղեկավարութեամբ Լիբանան պիտի յառաջդրուի Երեւանի մէջ բարգաւաճի: Նախագահ Լահուտ նաեւ ընդունեց տեղեկատուութեան նախարար Զաքի Արիտին, որ ներկայացուց արար տեղեկատուութեան նախարարներուն Գահրէի մէջ գումարուած ժողովին արդիւնքները՝ ընդգծելով, որ ժողովը զօրակցութիւն յայտնեց լիբանանեան հողերու ազատագրումի ամբողջացման:

## ԶՕՐԱԿՈՉ՝ ԻՍՐԱՅԵԼԱՅԻ ՊԱՅԵՍԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒՆ

### ԻՍՐԱՅԵԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ՆԵՐԽՈՒԾԵՑ ԲԱԼԲԻԼԻԱ, ԲԵԹՂԵՆՄ, ԺԵՆԻՆ, ՆԱՊԼՈՒՍ, ԹՈՒԼԵԱՐՄ ԵՒ ՊԻԹՈՒՆԻԱ

Իսրայէլ շաբաթավերջին շարունակեց պաղեստինեան քաղաքներու ներխուժումը, ինչպէս նաեւ բանակի միանալու հրաւեր ուղղեց պաղեստինեան շրջանները վերագրաւելու մտաւախութիւններուն: Պաշտպանութեան նախարար Պենիամին Պրն Էլիպար ըսաւ, որ վերջերս Իսրայէլը հարածող գործողութիւնները կը պահանջեն պիտուական լայնածիր արշաւ մը պաղեստինեան քաղաքներուն մէջ գործող ահաբեկչական ենթակառոյցներուն դէմ: Պաղեստինեան իշխանութեան կառավարութեան անդամ Սաէպ Սուրաբաթ ըսաւ, որ Իսրայէլ վերսկսած է գրաւման պաղեստինեան ինքնավար շրջաններուն, որոնք պաղեստինեան իշխանութեան յանձնուած էին խաղաղութեան փոխանցման հանգրուանի համաձայնագիրներուն յոյսին տակ: Որպէս ըսաւ նաեւ, որ Իսրայէլ մտադիր է կործանել պաղեստինեան իշխանութիւնը: Պաղեստինցի պաղեստինեան յայտնեցին, որ Իսրայէլեան մտաւորապէս վաթսուն հարասայլեր ու քրահապատ փոխադրակառքեր Այսր-յորդանանի Քալքիլիա քաղաքը մտան, պաշարեցին երկու շէքեր՝ անոնց բնակիչներէն պահանջելով հեռանալ: Ականատեսները ասելցուցին, որ բախումներ չեն արձանագրուած:

Շաբ.ը՝ էջ 10

## ԻՍՐԱՅԵԼԵԱՆ ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԴԵՍ ԼԻԲԱՆԱՆԻ ԴԻԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐՇԱԲԸ ՍԿՍԱԾ Է ԱՐԴԻՒՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Արտաքին գործոց նախարար Մահմուտ Համնուտ Շաբաթ օր յայտարարեց, որ Իսրայէլեան սպառնալիքներուն եւ կրպարտութիւններուն դէմ Լիբանանի դիւանագիտական արշաւը սկսած է արդիւնաւորել, ինչպէս ցոյց կու տան արտերկրի մէջ Լիբանանի դիւանագիտական ներկայացուցչութեանց յղած տեղեկագիրները, որոնք կը հաստատեն, թէ օտար պետութիւնները հասկացողութիւն կը ցուցաբերեն Լիբանանի կեցածքին առնչութեամբ:

Իսրայէլեան սպառնալիքները արծարծելու համար Համնուտ Շաբաթ օր հեռուաձայնեց Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսայի, ապա յայտնեց, որ Լիկան այդ սպառնալիքները դատապարտող յայտարարութիւն մը պիտի կատարէ:

Միւս կողմէ, Համնուտ երէկ պատգամ մը ուղղեց Մուսայի եւ ներկայացուց Լիբանան – Իսրայէլ սահմանագիծին վրայ տիրող վիճակը:

«Պահեստի ուժերու մէկ մասը վորաշարժի ենթարկելու Իսրայէլեան որոշումը Լիբանանի ուղղուած պատգամ մը կրնայ ըլլալ եւ Լիբանան մտահոգ է Իսրայէլեան թշնամական տրամադրութիւններէն», ըսաւ Համնուտ:

Մուսա, իր կարգին, մտահոգութիւն յայտնեց Իսրայէլի մազլոգական ընթացքին համար եւ կոչ ուղղեց ՄԱԿին ու միջազգային ընտանիքին՝ տէր կանգնելու իրենց պատասխանատուութիւններուն եւ հակակշռելու լարուածութեան մազլոցումը:

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԶԵԿԱՎԱՐՆԵՐԸ ՅԵՏԱԶԳԵՑԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐՈՒ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԲԱՆԱԿԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒ ԿԱՅԱՑՈՒՄԸ



Եւրոպական Միութեան վեհաժողովին ընթացքին բողոքի ցոյցեր կատարուեցան դրամատիրական կարգերու եւ համաշխարհայնացումին դէմ

Եւրոպական Միութեան ղեկավարները ապօրինի կերպով իրենց երկիրները մտած օտարակառուցութեան հարցին վերջ տալու նպատակով քայլեր որոշած են շաբաթավերջին Սպանիոյ մէջ կայացած վեհաժողովին մը ընթացքին: Սակայն երկօրեայ վեհաժողովին 15 ղեկավարները յետաձգած են բանալի որոշումներ՝ իրենց

պլոքին բարեկարգումին եւ ղէպի արեւելք ընդարձակման համար անհրաժեշտ գումարները վճարելու գծով: Զեկավարները հաւանութիւն տուած են ծրագիրներուն՝ թափ տալու համար սահմաններուն վրայ հսկողութեան, ապա ստանեալներու գծով միացեալ քաղաքականութիւն մը մշակելու եւ պահանջելու Միութեան

նէն դուրս երկիրներէ, որ գործակցին գաղթականներու հոսանքը հակադիր տակ առնելու համար: Գերմանիոյ եւ Բրիտանիոյ վարչապետները որոշ դժգոհութիւն արտայայտած են, թէ Ֆրանսայի գլխաւորութեամբ ընդգրկուած արգիլած է Ե. Միութեան

Շաբ.ը՝ էջ 10

## ՀԱՅԵՒՍՏԱՆԻ ԶԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան Շաբաթ օր ընդունեց Վրաստանի խորհրդարանի փոխնախագահ Վախթանգ Կոլպախայի գլխաւորած խորհրդարանական պատուիրակութիւնը, որ Երեւան կը գտնուի մասնակցելու համար Հայաստանի եւ Վրաստանի խորհրդարաններու համագործակցութեան միջխորհրդարանական յանձնաժողովի չորրորդ նիստին:

Նախագահ Քոչարեանին համառօտ ներկայացնելով յանձնաժողովի նիստի օրակարգին վրայ ընդգրկուած հարցերը՝ Վրաստանի խորհրդարանի փոխնախագահը յանձնաժողովի աշխատանքը արդիւնաւէտ գնահատած է եւ նշած է, թէ վրացական կողմը գոհ է քննարկումներու արդիւնքէն:

Կոլպախ տեղեկացուցած է, որ յանձնաժողովին

Շաբ.ը՝ էջ 10

## ՀԱՆՐԱՔՈՒԷ՝ ԱԶՐԴԵՅՃԱՆԻ ՄԷՁ

Արաբական իշխանութեան Հայտարար Ալիեւ անցեալ շաբաթավերջին հրամանագիր մը հրապարակած է՝ սահմանադրական փոփոխութիւններու առնչութեամբ յառաջիկայ Օգոստոսին հանրաքուէ կատարելու մասին:

Արաբական պետական հեռուստեսիլը յայտարարեց, որ Հայտարար Ալիեւ, որ Արաբական իշխանութեան է 1993էն ի վեր, որոշած է Օգոստոս 24ին հանրաքուէ մը կայացնել երկրին յետխորհրդային շրջանին սահմանադրութեան, յատկապէս՝ ընտրական օրէնքներուն եւ դատական գործընթացներուն մէջ փոփոխութիւններ կատարելու մասին:

Հայտարար Ալիեւ վերջերս յայտարարած էր, թէ յառաջիկայ տարի կայանալիք նախագահական ընտրութիւններուն թեկնածու պիտի ներկայա-

Շաբ.ը՝ էջ 2

## ՐԱՏ ԼԸ ՄՈՆԵՏ

### ՇԻՐԱՔ ՊԻՏԻ ՊԱՇՏՈՆԱԶՐԿԷ ԳԱՂՏՆԻ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒՆԵՐ

Ֆրանսական Լը Մոնտ օրաթերթը անցեալ շաբաթավերջին հաղորդեց, որ Ֆրանսայի նախագահ ժաք Շիրաք վճռած է պաշտօնազրկել գաղտնի սպասարկութեանց պատասխանատուներ, որովհետեւ կը կասկածի, թէ անոնք հրահանգած են քննութիւն կատարել իր եւ վարչապետ Ռաֆիք Հաբիբի, ինչպէս նաեւ ճափոնի սնանկացած Սուա Գրամատան նախագահ Սուիչի Օսատայի յարաբերութեանց մասին:

Օրաթերթին համաձայն, Շիրաք համոզուած է, որ Ֆրանսայի գաղտնի սպասարկութեան պետ Ժան Բլոտ Քոստիան եւ պետութեան անվտանգութեան սպասարկութեան պետ Ժան Ժաք Փասքալ հրահանգած են կամ «այլ խփած են» իր յիշեալ անձնատ-

րութեանց հետ կապերուն բնոյթին եւ տարողութեանց շուրջ քննութիւններուն: «Անոնք կրնան պաշտօնազրկել իր մանաւանդ որ վերջին նախագահական եւ խորհրդարանական վերջին ընտրութիւնները լայն լիազօրութիւններ տուած են Շիրաքի», կը գրէ Թերթը:

«Շիրաք համոզուած է, որ պետութեան անվտանգութեան սպասարկութիւնը վերակենդանացուցած է իր մտարձայնութիւնները, թէ 1988ին լիբանանեան միլիսներուն մօտ պատանդ հիմնադրութեան հարցումը արձակուելու համար Շիրաքի կառավարութիւնը վճարած է փրկագին մը, որուն մէկ մասը իրացուցած են ֆրանսացի քաղաքագետներ», կը հաղորդէր Լը Մոնտ:

## «ՔԱՅԻՏԱ» ՆՈՐ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐՈՒ ՊԻՏԻ ԶԵՌՆԱՐԿԷ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԴԵՍ

«Քայիտա» ցանցին մէկ բանբերը՝ Սուլէյման պու Ղայս, ձայնագրուած սփռումի մը ընթացքին, երէկ ըսած է, որ իմբակը կը կանգնի Թունուսի մէկ սինակոկին մէջ Ապրիլին տեղի ունեցած անձնասպանական մահացու յարձակումի մը ետին: Ան պուշացուցած է, որ յառաջիկայ օրերուն եւ ամիսներուն Ս. Նահանգներն իր յարձակումներու պիտի ձեռնարկէ ցանցը: «Քայիտա» կայանէն սփռուած էրիպին մէջ, բանբերը յայտնած է նաեւ, որ Ռուսիա պրն Լատին առողջ է եւ առողջութիւնը լաւ է: Թունուսի ձերպա կոչիին վրայ պատահած դէպքը իսլամ էր 21 Կոն, ներառեալ 14 գերմանացիներ:

«Քայիտա» հաղորդած է, որ երկրը ստացած է Շաբաթ օր, սակայն յայտնի չէ թէ անիկա ե՞րբ արձանագրուած է: Մինչ այդ, իտալական «Քորրիերե տելլա սերա» թերթը երէկ հաղորդած է, որ իտալացի քննիչներ գտած են անգործութեան մատնած են «Քայիտա»ի հետ կապեր ունեցող «ահաբեկչական բջիջ մը», որ կը ծրագրէր այս տարեկան

բին յարձակելի Պոլոնիայի մէջ 14րդ դարու մէկ եկեղեցիին վրայ:

Իշխանութիւնները կրցած են հեռուաձայնային խօսակցութիւններ լսել թունուսցիներու եւ մարտքիներու միջեւ, որոնք կապեր ունէին Պրն Լատինի գործակարներէն՝ լիպիացիի մը հետ: Այս վերջինը, որ Ամաս անունով ծանօթ է, անցեալ ամիս Բրիտանիոյ մէջ ձերբակալուած է:

Սեպտեմբեր 11ի յարձակումներէն ի վեր, իտալիա նախագահ Ճորճ Պուչի ահաբեկչութեան դէմ պայքարին ծիրէն ներս գտնուող գլխաւոր երկիրներէն եղած է: Միւս կողմէ, Մեքսիկոյ Արաբիոյ պաշտպանութեան նախարար Սուլթան պրն Ապտիւլ - Ալիյ իշխանը յայտնած է, որ իր երկիրը «երկաթեայ բռնուցքով պիտի հարուստէ ռեւէ մէկը, որ ահաբեկչութեան մեղսակից է»:

Ան կը խօսէր երէկ Ս. Արաբիոյ մէջ «Քայիտա»ի քանի մը անդամներու ձերբակալութեան առնչութեամբ:

Շաբ.ը՝ էջ 2



### 3. ԱՍԱՏԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՅՈՒՄ

Կանայի մէջ երէկ բացուեց կատարուեցաւ Սուրիոյ նախկին նախագահ Հաֆէզ Ասատի յուշարձանին: Հանդիսութիւնը հովանաւորեց նախագահ Կոր. Էմիլ Լահուտ, Կոր ներկայացուց տեղեկատուութեան նախարար Ղապի Արիտի: Ան այս առիթով արտասանեց իր խօսքին մէջ դիտել տուաւ, որ իսրայէլեան եւ ամերիկեան պայմանները մերժած Լիբանանի եւ Սուրիոյ վրայ ճնշումները կը սաստկանան:

«Իսրայէլն է իսկական սիւսբեկիչը եւ Լիբանանի մէջ «Քալիստա»ի կեդրոններ չկան», ըսաւ ան: Հանդիսութեան ներկայ էր Սուրիոյ տեղեկատուութեան նախարար Ասնան Օմրան, որ իր խօսքին մէջ մերժեց արաբներուն եւ իսլամներուն ուղղուած սիւսբեկչութեան ամբաստանութիւնը՝ վերահաստատելով, որ դիմադրութիւնը սիւսբեկչութիւն չէ եւ արաբները Կորն են իսրայէլեան սիւսբեկչութեան:

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԻՆ ԼՈՒԾՄԱՆ ՁԵԻՆՆԵՐՈՒՆ ՇՈՒՐՋ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Ելեմուտքի նախկին նախարար Ժորժ Գըրմ երէկ ծայրագիտեց հարցազրոյցի մը մէջ նկատել տուաւ, որ Լիբանանի տնտեսական միջոցառումները կը մատնեն զանոնք որդեգրող իշխանութեան խարխափումները, որովհետեւ տնտեսական վիճակին այտուճանաչումներուն շուրջ համաձայնութիւն չկայ:

«Պետական վարչամեքենայի եւ քաղաքական կեանքի նուազագոյն հարցին իսկ կ'օգտագործուի համայնքային լարուածութեան սաստկացումը, եւ համայնքային անկումը կը դիտուի վարչապետին քաղաքականութեան ուղղուած որեւէ քննադատութիւն», ըսաւ ան:

«Հարցը պետութեան պարտքերուն վճարումներն են եւ զանոնք կատարելու համար պետութիւնը կ'առնէ տկար քաղաքացիներն ու յիմարտներն, եւ պետութեան հասոյթներուն կտրւոյ վճարումներուն կ'երթայ, մինչ կատարութիւնը հին պարտքը նոր պարտքով կը վճարէ՝ վատթարացնելով վիճակը», ընչեց ան:

Գըրմ ըսաւ, որ յաւելելով արտադրութեան կարելի է փրկել տնտեսութիւնը. հետեւաբար անհրաժեշտ է թափ տալ երկրագործութեան, ճարտարարտեսին եւ զբօսաշրջութեան:

### ՔԱՆՈՒՄԸ ՏՈՂՈՎ

●ՎԱՐՉԱՊԵՏ Ռաֆիք Հարիրի երէկ ընդունեց Մալիզիոյ արտաքին գործոց նախարար Սայեթ Համիտ Պարբ եւ նախարարութեան ընդհանուր քարտուղար Ահմետ Ապտէլ Ռազզաքը, որոնց կ'ընկերակցէր Լիբանանի մէջ Մալիզիոյ գիտ պատուոյ հիւպատոս Օմար Հունտի: Խորհրդակցութիւնները կեդրոնացան երկու երկրները հետաքրքրող հարցերու վրայ:

●ՇԻՆՆԵՐՈՒ ԳԵՐԱԳՈՅՆ Խորհուրդի փոխ նախագահ Շէյխ Ապտէլ Էմիր Քապալան երէկ ըսաւ, որ Լիբանանի տնտեսական դժուարութիւնները յաղթահարելու համար անհրաժեշտ է միակամ ըլլալ, որովհետեւ Լիբանան կը վերականգնի միայն իր իսլամ քրիստոնեայ զաւակներուն գործակցութեամբ:

●ՅՈՅՆ Ուղղափառներու Հաքիմ Ռ. պատրիարքը երէկ ընդունեց հանրապետութեան միջազգային շէյխ Մոհամետ Ռաշիտ Քապալանին, որուն հետ ընդհանրեց երկու յուզող զանգան հարցեր:

●ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏՐՈՍ Հարպ Պաթրոնի մէջ Ռամզի Իրանի հոգեհարստեան պաշտօնէն ետք արտասանեց խօսք մը, որուն մէջ մտահոգութիւն յայտնեց երկրի պաշտօնակալ վիճակին համար՝ յիշեցնելով, որ Իրանի հետ սոսիալ-տնտեսական չորս դատարարներ, նախկին նախարար եւ երեսփոխան մը, ապա տեղեկ արարք մը պատահեցաւ կղերականի մը դէմ: «Այս բոլոր դէպքերը

թիւն մը այցելած է Սուրիոյ փոխ նախագահ Ապտէլ Հալիմ Խատտամի, որուն հետ ընդհանրեց Լիբանանի ներքին ճակատի ամրապնդումը՝ իսրայէլեան սպառնալիքներու դիմաց:

Այլ պատուիրակութիւն մը, նույնպէս Արաբիի գլխաւորութեամբ, այցելած է արտերկրի սուրիացիներու հարցերու նախարար Քատուրի, որուն հետ ընդհանրեց Լիբանանի եւ Սուրիոյ զարգացման հարցերը:

●ԵՐԵՎԱՆԻ Ուլախ Իտո, որ վարչապետ Ռաֆիք Հարիրիի գլխաւորած երեսփոխանական պլոնին մաս կը կազմէ, երէկ զարմանք յայտնեց խորհրդարանի նախագահին բնակավայր Այնէլթիւնէի մէջ մագուլթով բանող (փոքր պատերազմ) գործողներուն շուրջին համար, որուն ընթացքին բարձրացուած էին Հըզ-պալլայի ընդհանուր քարտուղար շէյխ Հասան Նասրալլայի նկատմամբ:

«Ոմանք կը խափանեն շինարարական եւ բարգաւաճման ծրագրերը. այս ծիրէն ներս Հըզպալլայ կ'ընդգրկուին Ուլախի կամուրջի կառուցումին», ըսաւ ան, ցաւ յայտնելով, որ Հըզպալլայի նման մեծ կուսակցութիւն մը նման մանր հարցերու միջամտութիւնը կ'ըլլայ:

●ԻՍՐԱԵԼԵԱՆԻ պատերազմական օդանւեր երէկ թռիչքներ կատարեցին հարաւի եւ արեւմտեան Պէրալի վերեւ՝ հասնելով մինչեւ Պէյրութ:

Հըզպալլայ յայտարարեց, որ դիմադրութեան ուժերը հակադաս զենքեր կրակ բացին բշտամի օդանւերուն վրայ:

### ԻՆՉ ԿԸ ԳԻԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

«Տնտեսական մարմինները եւ նախագահ Կոր. Էմիլ Լահուտի խորհրդակցութիւնները կ'որդեգրեն կառավարութեան տնտեսական ծրագիրը, որուն հիմնական կէտերն են սեփականաշնորհման արագացումը, վարչական բարեկարգումը եւ պետական ծախսերու սեղմումը» («Մուսաբապա») «Լիբանանի դուրս կը բերուի դրամ լուսլու միջազգային սեւ ցանկէն» («Նահար»), «Լիբանանի ֆրանսական ընկերութիւններու կողմէ դատական հարցեր պիտի ունենայ թիւրքիսի եւ Շարիաի ամբարտակի հարցերով» («Մուսաբա»), «նախարար Քըրտահի դատական ընդդէմ կը պատրաստէ Լիբանանի դէմ վայր դատախաչ Ատուրի փոխանցելու համար» եւ «նախագահ Լահուտ քաղաքական անձնատիրութիւններու կը կ'ուղղէ, որ վերջ տան պետական վարչամեքենային մէջ իրենց միջամտութիւններուն, որպէսզի կարելի ըլլայ պայն իսկապէս բարեկարգել» («Տիար»), խորհրդակցութիւնը կ'արեւելի լիբանանեան օրաթերթերու անցեալ շաբաթավերջի թիւերուն առաջին էջերը:

Միջազգային գետնի վրայ, տեղական մամուլին արժանանալով գլխաւոր հարցերը կը հանդիսանային Միջին Արեւելքի տագնապը եւ Միացեալ Նահանգներու ապահովութեան հարցը:

«Նահար» օրաթերթը կը գրէր. «Իսրայէլի սեղմող զինուոր կ'որոշէ պաշտօնական շրջանները գրաւուած պահել, մինչեւ որ Բեռլինի գործողութիւնները վերջ գտնեն», իսկ «Մաֆիր» կը նշէր, թէ «պաղեստինցիները 10 Կոնտրոլի, որոնց հինգը՝ երեխաներ. Իսրայէլ կը շարունակէ քաղաքներու գրաւումը եւ Արաբաթ կ'ընդունի Բեմի Տեյվիտի մէջ Պի Էլիսթրի ներկայացուցած ծրագրին պայմանները: Ճորձ Պուշ Ծարունի կ'ընէ. - Ամուր կեցէ՛ք,

մենք մեր կողքին ենք»: Միացեալ Նահանգներուն մէջ տիրող ապահովական մտահոգութիւններուն անդրադարձնելով՝ թերթերը կը գրէին, թէ լիբանանցի գործարար մը ամերիկեան իշխանութիւնները տեղեկ պահած է, թէ բարեկարգումը եւ պետական ծախսերու սեղմումը» («Մուսաբապա») «Լիբանանի դուրս կը բերուի դրամ լուսլու միջազգային սեւ ցանկէն» («Նահար»), «Լիբանանի ֆրանսական ընկերութիւններու կողմէ դատական հարցեր պիտի ունենայ թիւրքիսի եւ Շարիաի ամբարտակի հարցերով» («Մուսաբա»), «նախարար Քըրտահի դատական ընդդէմ կը պատրաստէ Լիբանանի դէմ վայր դատախաչ Ատուրի փոխանցելու համար» եւ «նախագահ Լահուտ քաղաքական անձնատիրութիւններու կը կ'ուղղէ, որ վերջ տան պետական վարչամեքենային մէջ իրենց միջամտութիւններուն, որպէսզի կարելի ըլլայ պայն իսկապէս բարեկարգել» («Տիար»), խորհրդակցութիւնը կ'արեւելի լիբանանեան օրաթերթերու անցեալ շաբաթավերջի թիւերուն առաջին էջերը:

Միջազգային գետնի վրայ, տեղական մամուլին արժանանալով գլխաւոր հարցերը կը հանդիսանային Միջին Արեւելքի տագնապը եւ Միացեալ Նահանգներու ապահովութեան հարցը:

«Նահար» օրաթերթը կը գրէր. «Իսրայէլի սեղմող զինուոր կ'որոշէ պաշտօնական շրջանները գրաւուած պահել, մինչեւ որ Բեռլինի գործողութիւնները վերջ գտնեն», իսկ «Մաֆիր» կը նշէր, թէ «պաղեստինցիները 10 Կոնտրոլի, որոնց հինգը՝ երեխաներ. Իսրայէլ կը շարունակէ քաղաքներու գրաւումը եւ Արաբաթ կ'ընդունի Բեմի Տեյվիտի մէջ Պի Էլիսթրի ներկայացուցած ծրագրին պայմանները: Ճորձ Պուշ Ծարունի կ'ընէ. - Ամուր կեցէ՛ք,

հային օրուան հանդիսութիւնները: Ըստ թերթերուն, բացման հանդիսութեան ներկայ գտնուած են մեծ թիւով պաշտօնական անձնատիրութիւններ, դեսպաններ եւ հոծ բազմութիւն մը:

Պրեզիդէնտ պետական քննութիւններուն երկրորդ օրուան առիթով, թերթերու թղթակիրները շրջած են քննութեան կեդրոնները: Ըստ աշակերտներուն, թէ անհանդարտ ու խաղաղ մթնոլորտ կը շարունակուի, սակայն հարցարանները երկրորդ օրը բաւական դժուարացած են: Թերթերուն համաձայն, աշակերտները գլխաւորաբար գանգատած են կենսաբանութեան հարցարանէն:

Թերթերը նաեւ լուսարձակի տակ առած էին Հինգշաբթի օր նախարարաց խորհուրդին կողմէ քննարկուելիք քարտեզներու հարցը: Անոնք ընդհանրապէս հարց կու տային, թէ արդեօք Լիբանանի իսկապէս կը քալէ՞ դէպի մարտ կենսոլորտ:

«Նահար» օրաթերթը յատուկ ուշադրութիւն տալով պատրաստած էր Լիբանանի մէջ պաշտօնական մամուլի: Ըստ անոր, «130 հազար պաշտօնական մարտիկներ կը պահանջէ 130 միլիոն տոլար»: «Ականաւորութիւններու պատմութիւնը սկսած է 1985 թուականին եւ անիկա մեծ թիւով Կորն պատճառները: Պրորի կ'ընէ, Իսրայէլ տակաւին կը գրաւէ հարաւը իր ակնակներով սիւստր վնասներ պատճառելով»:

«Տիար» կը հրապարակէր նախագահին տակ առած էին Պուշի միջոց եղած քննարկումները: Ընդհանուր թղթածրարը:

**ՏԱՐԵԿԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ ՔԵՐՍԷՍ**

Կազմակերպութեամբ  
**Շ. Յ. ԼԻԲԱՆԱՆԻ**

**ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆԻ**

ԹՈՒՎԱԿԱՆ՝ ՅՈՒՆԻՍ 5, 6, 7, 2002:

**ՎԱՅՐ՝ Պուրճ Համուտի Ազատագրութեան փարքին, Մասքըր Մոլին կից:**

**ԺԱՄ՝ ԱՌԱՒՕՏԵԱՆ 10:00ԷՆ ՄԻՆՉԵՒ ԵՐԵՎԱՆԻ 11:00:**

Մասնակցութեամբ՝



**ԱՃՃԵԱՆ ԹՈՒՐԻՉ 2002ի ՇՐՋԱՊՏՈՅՆԵՐ**

●Ամէն Շաբաթ Պէյրութէն շքեղ զբօսանալով 8 օր Կիպրոս, Ռոտտո, Արեւը, Յունական կղզիները առանց վիզայի 380\$:

●Varna 8 օր 280\$, 15 օր 385\$, պանկայօ նախաձայով:

●Կիպրոս 4 օրը 195\$, 7 օրը 235, պանդոկ, նախաձայ + տոմս:

●Ամէն Երկուշաբթի 8 օր Հայաստան 375\$, 15 օրը 530\$, պանդոկ, նախաձայ, օդանւայի տոմսակով:

●8-29 Յուլիս եւ 9-30 Օգոստոս, աշակերտական, սկաւտական եւ երիտասարդական, օրական 4 անգամ ուտելով, Սեւանի եւ Արգհի մէջ տաք տարբեր պտոյտներով, տոմսը, վիզան + տուրքերով 399, 499, 555, 780\$, թոխը Հալպէն, իշխատակի նուրբներով:

●8 օր Եպրոս՝ Սեւ եով 575\$ 15 օր 820\$:

2002ի նորոյն օրը արժեքներով

●Ամէն Կիրակի Ղամապու, Սեւանյա, Պուտան 12\$:

●Ամէն Կիրակի Ղամապու, Սեւանյա, Մուր, Կանա 8\$:

●Էտնը, Արգ, Ֆարայա 8\$, Մայոս, Մուր, Կանա 8\$:

●Ամէն առտու եւ իրիկուն Հալպէ 9\$, Ղամապու 6\$ նոր օրը արժեքներով:

●Վարձու կու տանք մեծ եւ փոքր օրը արժեքներով:

●Ամէն Շաբաթ Լաքաքի 5 աստղանի պանդոկ 3 օր 75\$:

**ԲԱՅԱՌՈՒ ԵՐԱՊՏՈՅՆ ԴԵՊՈ ՀԱՅԱՍՏԱՆ**

●Ա - 8 - 15 Յուլիս, Բ - 12 - 19 Յուլիս առաջնակարգ պանդոկ, 5 օր պտոյտներ, ձաշկերոյն-պարահանդէս, իշխատակի նուրբներով, ձրի վիճակահանութիւն, սկսեալ 575 \$ են, ներառեալ վիզան եւ օդակայանի տուրքերը:

ԱՃՃԵԱՆ ԹՈՒՐԻՉ հեռ. 01-261177 - 240654 - 03-233978 - գիշերը՝ 01-258887:

**ՏԱՐԵԿԱՆ ԼԱՄԱԳՈՅՆ ՆՈՒԵՐ**

**ԱՅՍ ԱՄԻՍ ՅԱՏՈՒԿ ԳԻՆ ԲՈՒՈՐ ԱՏՈՒԿ ՍԿՍՈՂ ԱՆՈՒՆԵՐՈՒՆ. ԿԵՍ ԺԱՄՆՈՅ ՎԻԴԵՕ ՇՐՋԱՆԵՐ ԱՆՉԻՆ ԱՆՈՒՆՈՎ, ՄԱԿԱՆՈՒՆՈՎ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆԿԱՐՆԵՐՈՎ**

Դիմել՝ ԱՐԱ ԷԼԷԷՃԵԱՆ ՀԱՍ. Հեռ. 01 / 261696, 03 / 250518

**VALSE International Cosmetics**



Armen Haroutunian & Co.  
DORA - Magie Al-Hajj Str. - Tel. 01-265449  
Fax: 01-324617 - P.O.Box 90-150 Beirut-Lebanon

**YOGAՒ**

**ՅԱՏՈՒԿ ԴԱՍԵՆԹԱՅՔ**

7 - 14 տարեկան փոքրերու համար Յուլիս ամսուան ընթացքին

**ԱՆԿԱՐ**

Մանրամասնութեան համար հեռաձայնել՝ 03-749473 ՄԱՐԱԼ ՕՇԱՆԵՍԵԱՆԻՆ ամէն օր կէսօրուան ժամը 12:00էն 1:00:

**ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆ**

Լիբանանի Հայոց Ազգային առաջնորդարանը այսու կը յայտարարէ, թէ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատան մէջ ձեռնարկուած արդիական ոճով դարակ-դամբարաններու շինարարական աշխատանքը արդէն իսկ իր լրումին հասած է:


Հետեւաբար, կոչ կ'ուղղենք բոլոր այն պաշտօնակիրներուն, որոնք. -

- 1.- Նախօրոք սեփական դարակ-դամբարան ունենալու իրենց նիւթական պարտաւորութիւնները կատարած են, պարտին հանդիպի Ազգային առաջնորդարան մէջ ձեռք տալով առաջ ժամը 9:00էն 1:00, դարակ-դամբարանի «գործածութեան իրաւունքի հաստատագիր» ձեռք ձգելու համար:
- 2.- Դարակ-դամբարանի «գործածութեան իրաւունքի հաստատագիր» ձեռք բերումէն ետք միայն, Ազգայինները ի վիճակի պիտի ըլլան իրենց հարապատեններուն աճիւններու փոխադրութեան հարցով պարզիլ, ինչպէս նաեւ իրենց նոր հանգուցեալ պարագաները թաղել:
- 3.- Սահմանափակ թիւով դարակ-դամբարաններ կը մնան, որոնց իւրաքանչիւրին սակը 1500 տոլար է:
- 4.- Կան նաեւ դամբարաններ երրորդ յարկի վրայ, իւրաքանչիւրին սակը՝ 3000 տոլար:
- 5.- Կ'ուզենք մեր պաշտօնակիրներուն ուշադրութեան յանձնել, որ Տըրն Շրպայէի Ազգային գերեզմանատան մէջ նաեւ դարակ-դամբարաններ կան, տրամադրելի մեր ազգի պաշտօնակիրներուն, իւրաքանչիւրին սակը՝ 1500 տոլար:

ԴԻՄԵՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

**ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:



ԲԱՆԱԶԵԹԵՐ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Գ. ԳՈՐԾԱԿՅՈՒԹԻՒՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

Վեհափառ հայրապետը թե՛ իր բացման պատգամին մէջ եւ թե՛ Ազգային Ընդհանուր Ժողովին իր արտայայտած մտածումներուն նամբով, յատուկ կարեւորութեամբ շեշտեց Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Ա. Աթոռներուն միջեւ գործակցութիւնը աւելի ամրապնդելու եւ գոյութիւն ունեցող որոշ տարակարծութիւններուն հանգրուանային կերպով լուծում տալու անհրաժեշտութիւնը:

Ազգային Ընդհանուր Ժողովը ամբողջութեամբ որդեգրելով վեհափառ հայրապետի մտածումը եւ նախանշաններու շարքին, կ'որոշէ Ա. Էջմիածնի հետ անմիջապէս խօսակցութեան եւ խորհրդակցութեան գործընթացի մը ձեւերակել: Եղբայրական սիրոյ ու հասկացողութեան մթնոլորտի մէջ տեղի ունենալիք այս խօսակցութեան ընթացքին, անհրաժեշտ է բնական մեր կեղծելու դիմագրւած բոլոր դժուարութիւնները՝ թեմական ու վարչական հարցեր, ինչպէս նաեւ՝ հայ եկեղեցւոյ բարեկարգութեան առնչուած հարցեր: Գոյութիւն ունեցող հարցերու լուծման հարկ է մտենալ իրապաշտ կերպով՝ նկատի ունենալով գաղութներուն ու թեմերուն ներքին եւ արտաքին պայմանները:

Դ.

ՀԱՅԵՑԻ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Ընդհանուր Ժողովը, լսելէ ետք հայեցի դաստիարակութեան մասին տրուած երկու զեկոյցները եւ պատգամաւորներուն արտայայտած կարծիքները, կը հաստատէ, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կարեւոր դեր վերապահուած է հայեցի դաստիարակութեան ծրագիրներու մշակումին եւ ուսուցիչներու պատրաստութեան մարզերուն մէջ:

Ազգային Ընդհանուր Ժողովը կը թելադրէ Ազգային Կեդրոնական Վարչութեան:

1. Մշակել հայեցի դաստիարակութեան ուղեգիծ, որ ընդգրկէ հայերէնի եւ հայոց պատմութեան ուսուցումը, ինչպէս նաեւ հայկական ոգիի, ազգային դիմագիծի, մշակոյթի եւ անհատութիւններու փոխանցումը՝ իբրեւ հիմք թեմերու մէջ կիրառելի կրթական ծրագիրներուն:

2. Մղել թեմերը օգտագործելու արդի արհեստագիտութեան ընթացքով միջոցները հայեցի դաստիարակութեան բոլոր բնագավառներուն մէջ եւ պատրաստելու իրենց պայմաններուն պատշաճ ոգասփռքեր, որոնք իրենց բովանդակութեամբ գոհացնեն մանկավարժական արդի պահանջները:

3. Կազմակերպել ուսուցչական եւ կրթական մասնագետներու համագումարներ եւ աշակցիլ թեմերուն կազմակերպելու նման համագումարներ:

4. Մասնաւոր ուշադրութիւն դարձնել օտար վարժարաններ յանձնող եւ հայկական շրջանակէն դուրս մեծցող նոր սերունդի հայեցի դաստիարակութեան:

Ե.

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԳԻ ԻՐԱՌՈՒՆՔՆԵՐՈՒ ՀԵՏԱՊՆՂՈՒՄ

Ազգային Ընդհանուր Ժողովը, լսելէ ետք հայ Ժողովուրդի իրաւունքներու հետապնդումի մասին տրուած երկու զեկոյցները եւ պատգամաւորներուն արտայայտած կարծիքները, կը գնահատէ վեհափառ հայրապետին գլխաւորու-

թեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան տարած աշխատանքները հայ Ժողովուրդի անժամանցելի իրաւունքներու պահանջատիրութեան գծով՝ միջազգային ատենաներու եւ միջեկեղեցական շրջանակներու մէջ:

Ազգային Ընդհանուր Ժողովը կը թելադրէ Ազգային Կեդրոնական Վարչութեան:

1. Շարունակել իր բազմերես եւ յանձնառու գործունեութիւնը, գործակցաբար Հայ Դատը հետապնդող կազմակերպութիւններուն, իրականացնելու համար Ցեղասպանութեան միջազգային ճանաչումը, մեր Ժողովուրդի իրաւունքներուն արդար հետապնդումը, Արցախի հարցին արդար լուծումը եւ Հայաստանի հզօրացումը:

2. Հաստատել կաթողիկոսարանի մէջ Ցեղասպանութեան ուսումնասիրութեան կեդրոն մը, ուր կարելի ըլլալ հետազօտութիւններ կատարել, վաւերագրական նիւթեր հաւաքել, կայքէջ բանալ, քարոզչական աշխատանք տանիլ, հրատարակութիւններ ընել հայ եւ օտար մասնագետներու եւ համալսարանականներու աշխատակցութեամբ:

3. Տէր Զօրի Ապրիլեան համալիրը վերածնունդի իբրեւ համազգային ուխտատեղի:

4. Ուղղութիւն տալ եւ աշակցիլ թեմերուն մէջ տարուող հայ Ժողովուրդի իրաւունքներու հետապնդման բոլոր աշխատանքներուն:

5. Ամենայն հայոց կաթողիկոսութեան հետ միասնաբար յարմար առիթով սրբադասել Մեծ Եղեռնի ճանապարհները:

Զ.

ՀԱՅԱՍՏԱՆ - ՍՓԻՒՈՔ ԳՈՐԾԱԿՅՈՒԹԻՒՆ

Ազգային Ընդհանուր Ժողովը, լսելէ ետք Հայաստան - Սփիւռք գործակցութեան մասին տրուած երկու զեկոյցները եւ պատգամաւորներուն արտայայտած կարծիքները, կը վերահաստատէ իր անխախտ հիմնադրը՝ Հայաստանը՝ Հայաստանը հայրենիքն է բոլոր հայերուն եւ հայ Ժողովուրդին դիմագրւած հարցերը հաւասարապէս կը պատկանին Հայաստանին եւ Սփիւռքին: Հայ Ժողովուրդին հայ երկու հատուածները պետք է համագործակցիլ փոխադարձ յարգանքով, ապահովելու համար թէ՛ Սփիւռքի եւ թէ՛ Հայաստանի զօրացումը եւ անոնց ներդրումը բարգաւաճումը:

Հայաստանի Հանրապետութեան ու Արցախի Հանրապետութեան, ինչպէս նաեւ Սփիւռքի հզօրացման իր յանձնառուութեան մեկնելով՝ Ազգային Ընդհանուր Ժողովը կը թելադրէ Ազգային Կեդրոնական Վարչութեան:

1. Աշխատիլ, որ Հայաստան - Սփիւռք խորհրդատուները կազմակերպուին աւելի բժախոտութեամբ, հայութեան բոլոր հատուածներուն մասնակցութիւնը ապահովելով եւ գործնական ծրագիրներ մշակելու կարելիութիւնը երաշխաւորելով:

2. Այժմէն իսկ սկսիլ Հայաստան - Սփիւռք Գ. խորհրդատուների պատրաստութեան, հետամուտ ըլլալ մասնակցելու խորհրդատուների ծրագրումին եւ կազմակերպութեան աշխատանքներուն:

3. Գնահատման ենթարկել կաթողիկոսութեան տարբեր թեմերու մասնակցութիւնը Հայաստան Համահայկական Հիմնադրամի աշխատանքներուն եւ համարել յապագայ գործակցութիւնը՝ թեմերուն տալով անհրաժեշտ ուղղութիւն:

(Շար. 3 եւ վերջ)

ՌՈՒՍ «ԱԶԳԱՅԻՆԱԿԱՆ» ՆԵՐՈՒ ԲՈՒՆԱՐԱՐՔԸ ԿԸ ԿԱՆԽՈՒԻ

Ռուսական Իսթրա քաղաքի քաղաքապետարանին հրաւերով 20 Յունիսին Մոսկուայի հայկական գեղագիտական կեդրոնի «Ջուարբնոց» համոյթը ներկայացած էր մասնակցելու Ռուսիոյ անկախութեան օրուան նուիրուած ձեռնարկին:

Հանդիսատեսներուն կողմէ համերգային ծրագիրի առաջին բաժինի բուն ընդունելութեան ետք, կազմակերպիչները կը պահանջեն անյապաղ դադարեցնել համերգը եւ հաւաքել սարքաւորումները: Այնուհետեւ շեքը կը մտնեն մեծ թիւով ուստիկաններ եւ «Ջուարբնոց»ի անդամներուն բոլոր կողմերէն երկու շարքով շրջափակած կը տեղափոխեն «օթոպիւս»:

Ռուս ուստիկանութեան այս կարգադրութեան ետք պարզուած է, որ գինով եւ թմրեցուցիչ օգտագործած անիւնու գլուխներով բազմաթիւ երիտասարդներ շրջապատած էին մշակոյթի տան շեքը «Իրենց հայրենիքին մէջ, բաւական լաւ զգացող հայեր»ուն հետ հաշտեցարար տեսնելու վճռակամութեամբ:

Ուստիկանութիւնը հայհոյող «ազգայնական»ներուն ամբոխին մէջ դժուարութեամբ ճամբայ կը բանայ դէպի «օթոպիւս» կարելիութիւն ընձեռնելով այդ վայրէն անվճար տեղափոխելու Մոսկուա:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

- «ՀԱՅԱՍՏԱՆ ԾԱՂԿԱՔԱՂ»

«Շողակն» համոյթին կողմէ պատրաստուած «Հայաստան ծաղկաբաղ» խոսասիրիկը, պատմական ծանօթագրութիւններու իր անդրին հրատարակելու եւ իւրաքանչիւր երաժշտական կտորի շուրջ բացատրական նով հայ մշակոյթը օտարներուն ծանօթացնելու միջոց մըն է:

Շողակաբաղին երաժշտութիւնը ներկայացնող «Շողակն» համոյթին մաս կը կազմեն Գէորգ Տապաղեան (տուտուկ, զուռնա, շլի), Նորայր Դաւթեան (քամանչա), Ալեքսան Թարութիւնեան (երգիչ), Յասմիկ Թարութիւնեան (երգիչ), Կարինէ Յովհաննիսեան (գանն), Կամո Խաչատուրեան (տնօր), Գրիգոր Թազուրեան (տուտուկ), Լեւոն Թեւեանեան (թաւ շլի):

Հաւաքածոյին շարքին կը գտնենք գուսան Շերամի «Շորոր» եւ «Սարէն կու գայի» երգերը, ժողովրդային-ազգագրական երաժշտութեան մեր գոհարներէն եւ երգեր Սայաթ Նովայէն:

- «ՄԱՆՐԱՆԿԱՐ»

Տուտուկահար Գէորգ Տապաղեանի մեկնաբանութեամբ այս խոսասիրիկը կ'ընդգրկէ ազգագրական, աշուղական եւ հոգեւոր մեղեդիներու հաւաքածոյ մը, ուր կը գտնենք Սայաթ Նովայի «Քանի վուր ճան իմ»ը, աշուղներու վերջին սերունդէն գուսան Հաւասիի «Եայլաւոր եար», Շիրակի եւ Զաւաթքի պարզանակներ, Կոմիտասի «Ալագբազ-խնկի ծառ», միջնադարու «Վարդանի մօր ողբը», Գրիգոր Նարեկացիի «Հաւուն, հաւուն»ը, Ներսէս Շնորհալիի 12րդ դարու «Առաւօտ Լուսոյն», եւ այլն:

«Մանրանկար» խոսասիրիկի իւրայատկութիւնը կը կայանայ այն իրողութեան մէջ, որ ինչ տեղ գտած են այնպիսի երաժշտական կտորներ, որոնք իսկապէս մաս կը կազմեն հայկական երաժշտութեան հատուկ տիրուած փաղանգին, իսկ անոնց մեկնաբան Գէորգ Տապաղեան կը նկատուի հայ տուտուկի վարպետներէն:

- ԱՄԵՐԻԿԱԿԱՅ ԶՈՒԹԱԿԱԿԱՐ ԲԻՄ ՔԱՇՔԱՇԵԱՆ

Ամերիկահայ ջութակահար Քիմ Քաշքաշեան իտալացի վեթերան երաժիշտ Լուչիանօ Պերիոյի ձայնագրութեան մէջ անոր մենակատարն է:

«Ի. Սի. Էմ.» ընկերութեան կողմէ Լուչիանօ Պերիոյի ստեղծագործութիւններուն ձայնագրութեանն է ետք պիտի հրատարակուի Քաշքաշեանի երկրորդ ձայնագրութիւնը, որ պիտի ընդգրկէ հայ երաժիշտ Տիգրան Մանսուրեանի արդիապաշտ եւ հայկական ժողովրդային երաժշտութեան վրայ հիմնուած ստեղծագործութիւնները:

Ինտիփեյնըմք» թերթի թղթակից Մայքըլ Զըրչ Քաշքաշեանի հետ վերջերս կատարած հարցազրոյցին ընթացքին հարց տուած է անոր հայկականութեան մասին, թէ որքանով հայ է ան: Ք. Քաշքաշեան պատասխանած է. «Թուղթի վրայ եւ արիւնով՝ 100 առ հարիւր համեմատութեամբ: Հայրս փոքր մանչ մըն էր, երբ Միացեալ Նահանգներ հասած է: Մայրս թէեւ Ամերիկա ծնած է, սակայն մէկ բառ անգլերէն չէ լսած մինչեւ 6 տարեկան: Ծնած եմ Տիթրոյիթ, սակայն խորապէս կապուած եմ հայ Ժողովուրդին եւ նոյնիման հայոց երկրին»:

Ք. Քաշքաշեան ունի աւելի քան 15 ձայնագրութիւններ, ինչպէս նաեւ «Ulysses Gaze» ժապաւէնի երաժշտութիւնը վիոլայով կը մեկնաբանուի Քիմ Քաշքաշեանի կողմէ:

- «ԾԻՐԱՆՆԵՐ ԵԿԵՄԷՆ»

Դժամեայ տուտուկահար Զիւան Գասպարեանի մեկնաբանութեամբ եւ Վաչիկ Աւագեանի (տուտուկ) ու Լեւոն Արշակունցի (տնօր) ընկերակցութեամբ հրատարակուած է «Ծիրաններ եղեմէն» խոսասիրիկը: Խոսասիրիկը կ'ընդգրկէ հայ երաժշտութեան գանազան ժամանակաշրջաններէն եկած կտորներ: Հոն տեղ գտած են աւանդական հարսանեկան «Տարան, տարան»ը, Մարաշի, Սուրմալուի եւ էրզրումի պարեղանակներ, հայ-վրացական «Շալախօ» այրերու պարը, Արամ Խաչատրեանի «Պէպոյի երգը», Զ.

«ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ»Ի ՊԱՐՍԿԵՐԷՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

16 Յունիսին Ս. Էջմիածինի մէջ գրողներու համահայկական առաջին խորհրդաժողովին մասնակցիչները՝ հանդիպում մը ունեցան ամենայն հայոց Բ. կաթողիկոսի հետ: Հանդիպման ընթացքին պարսկահայ բանաստեղծ Ազատ Մաթեան վեհափառին յանձնեց Գրիգոր Նարեկացիի «Մատեան ողբերգութեան» աշխատութեան այս տարի լոյս տեսած պարսկերէն հրատարակութեան մէկ օրինակը:

60ամեայ բանաստեղծը թարգմանութեան վրայ որոշ ընդմիջումներով աշխատած է շուրջ երեք տասնամեակ: Պարսկերէն թարգմանութիւնը լոյս տեսած է 2002 օրինակով՝ նուիրուելով Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակին եւ «Մատեան Ողբերգութեան»ի 1000ամեակին:

Հրատարակութիւնը իրականացած է Թեհրանի հայ թեմական խորհուրդին ենթակայ «Եղիա Բաբուժեան» հրատարակչական ֆոնտին միջոցով: Գիրքը հրատարակուած է նաեւ Իրանի նախագահին յայտարարած «2001 թուականը մշակութային երկխօսութեան տարի» ծրագիրի շրջագիծին մէջ:

Գասպարեանի անձնական յօրինումներէն «Տարիներս անցան»ը եւ այլն:

Տուտուկահար Զիւան Գասպարեան ԵՌՆԵՄՔՕԻ կողմէ կազմակերպուած երաժշտական չորս մրցանքներու առաջնութիւնը խլած է:

Տուտուկը Հոլիվուտի շարժապատկերի աշխարհ մուտք գործած է Զ. Գասպարեանի միջոցով: Անոր տուտուկին արձանագրուած կը լսենք «Տը լասթ թեմփթէյլըն աֆ ձիզըս Բրայսթ», «Իրաչա հաուս», «Տը կլատիէյլըն» եւ այլ ժապաւէններու մէջ:



ՃՈՆ ՕՐՏՈՒԷՅԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ՝ ՍԻՆԻՔԻ ՄԱՐԶ

12էն 14 Յունիս աշխատանքային այցելութեամբ Սիւնիք կը գտնուէր Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ճոն Օրտուէյ՝ մարզին ծանօթանալու նպատակով:

Դեսպանը այցելեց Սիսիան, Գորիս, Կապան, Մեղրի շրջանները, ինչպէս նաեւ՝ այդ շրջաններուն մէջ գտնուող շարք մը հաստատութիւններ, ուր կ'իրականացուին ամերիկեան կազմակերպութիւններու կողմէ ֆինանսաւորուող ծրագիրներ:

Սիւնիքի մարզպետարանին մէջ ունեցած հանդիպման ընթացքին Սիւնիքի մարզպետ Էդիկ Բարսեղեան ներկայացուց մարզը, խօսեցաւ հարցերու մասին, անոնցմէ առանձնացնելով, բնակչութեան անգործութեան հարցը: Մարզպետը շնորհակալութիւն յայտնեց ամերիկեան կազմակերպութիւններու միջոցով մարզին մէջ իրականացուող ծրագիրներուն համար:

Հետագայ համագործակցութեան նպատակով ձեռք բերուեցան համաձայնութիւններ: Միացեալ Նահանգներու դեսպանը հաւաստիացուց, որ Միացեալ Նահանգներու կողմէ Սիւնիքի դպրոցներուն մէջ իրականացուող համակարգչային ցանցերու ստեղծման ծրագիրը պիտի շարունակուի:

ONE SECOND IS ENOUGH... Արհասը Կը Պատահի Երկվարկանի Մը Մէջ...  ...BUT WE USE THEM ALL. ...ԻՍԿ ՄԵՆԵ ՆԵՐԿԱՆ ԵՆԵ ԱՄԷՆ ԵՐԿՎԱՐԿԱՆ. ԱՖՀԻԼ AFHIL  Աֆիլ-Ընդ. Բ. Յարկ, 766. Եւ Յարկ. (01) 262231-242556-242557 Imn. AFED, 2ème étage, Tél. and Fax: (01) 262231-242556-242557

ՀԱՄԲԻԿ ԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԷՆ HAMPIG SASSOUNIAN CSP - L.A.C. B - 5 - 131 44750 60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536 — USA

# ՍԱՌԵՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ-ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆ ԶԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Չնայած ներկայիս խորհրդարանի գործունեությանը մեկ տարուց պակաս ժամանակ է մնացել, սակայն օրէնսդիրն ակնյայտօրէն իրեն արդէն սպառել է, եւ այլ իրավիճակում պարզապէս աներկբայ կը լինէր նրա լուծարումը:

Սակայն ստեղծուած վիճակը բաւականին իւրօրինակ է եւ, որքան էլ զարմանալի է, ուժեղ շահերից չի բխում:

Երկրի նախագահի պաշտօնակազմի արհեստական նախաձեռնութեան պատճառով օրէնսդիրն անկանոն գործունեութեան խափանումը նախագահին ազատօրէն կարող էր մեկնաբանել որպէս Ազգային ժողովի գործունեութեան անհնարինութիւն եւ արձակել խորհրդարանը, ինչպէս սահմանուած է սահմանադրութեամբ: Ընդդիմադիրները կարծում են, թէ նախագահը նման քայլի դիմելու իրաւունք պարզապէս չունի, քանի որ սկսուած է պաշտօնակազմի գործունեութեան մեծամասնութեան կողմէն քաղաքական մեծամասնութեան նախագիծը քննարկման դնելու հետեւողականութիւնը: Այս «համարադրութեան» մէջ շատ կարեւոր է, թէ ո՞ր կողմն առաւել համոզիչ է կ'ընդունուի:

Առայժմ դա յաղդուած է քաղաքական մեծամասնութեանը, որը, չնայած գործարարած կոշտ միջոցներին, հիմնաւորում է, որ նախագիծը ինքննապատակ է, յղի ծանր, անկանխատեսելի հետեւանքներով եւ հետագայի անորոշութեամբ: Բացի դրանից, մեծամասնութեան վերջին քայլը՝ պաշտօնակազմի նախագիծն Ազգային ժողովի օրակարգ մտցնելու սահմանադրականութեան հարցով Սահմանադրական Դատարանին դիմելու նախաձեռնութիւնը շատ լուրջ հարուած հասցրեց ընդդիմութեանը, որը պարզապէս քաղաքական չունեցող համաձայնելու, փաստօրէն, նոր գործընթաց սկսելու: Թէեւ քաղաքական մեծամասնութիւնն ինքը մեծ յոյսեր չէր կարող կապել Սահմանադրական Դատարանին հետ եւ հասկանում էր, որ կարող է տանուլ տալ խաղը, այնուամենայնիւ, ընդդիմութիւնը, չգիտակցելով այս հեռանկարը, խուսափեց նախաձեռնութիւնից միմիայն մէկ պատճառով. ցանկացած դէպքում Սահմանադրական Դատարանին որոշման պարագայում իրենք գրկուելու են շահարկման հետագայ հնարաւորութիւնից եւ փաստօրէն ապացուցելու իրենց սնանկութիւնը ընտրաշահուած: Փոխարքարք այս անվստահութեան հետեւանքով ընթացք չտուեցին Սահմանադրական Դատարանին դիմելու գործընթացին, թէեւ դա ստեղծուած ճգնաժամային իրավիճակից դուրս գալու լաւագոյն ելքը կը լինէր:

Այս հանգամանքները լուրջ հիմք կարող էին դառնալ նախագահի համար՝ ցրելու խորհրդարանը, եթէ վերջինս զգար դրա անհրաժեշտութիւնը զուտ քաղաքական նպատակադրումներից ելնելով: Պատահական է, որ նախագահը խորհրդարանում ստեղծուած ծրարակցից որպէս 6-7 պատգամաւոր օրինակացուցութիւն, այսինքն՝ իրավիճակը վերահսկելի համարեց, հետեւաբար նաեւ՝ Ազգային ժողովը չլուծարելու հիմնաւորում: Եւ դա հասկանալի է, ինչորոշ արանում ընդդիմութիւնը տեսակարար կէտ էր կազմում, նրան լուրջ խոչընդոտ չի կարող հանդիսանալ, Ազգային ժողովը կառավարութեան կցորդն է, իսկ նման խորհրդարանից հրաժարումը գալիք նախագահական ընտրութիւնների տեսակէտից սխալ կը լինէր:

Ընդդիմադիր թեւի համար ճգնաժամից դուրս գալու՝ խորհրդարանի ցրումը ամենանախաստ հանգուցալուծումը կարող է լինել: Միակ յաղողութիւնը, որին մէկ տարուան պայքարում հասել է ընդդիմութիւնը, դա խորհրդարանական ամպիոնից իրենց նուազող ընտրական գուճին ներկայանալն է եղել եւ, ի վերջոյ, մի կերպ պաշտօնակազմի նախագիծը խցկումը քաղաքական մեծամասնութեան կողմը: Պատահական է, որ Ազգային ժողովի ամպիոնի գրաւմամբ նիստերի տապալումը հիմա ընդդիմութիւնն իր յաղթարշաւի սկիզբն է համարում, թէեւ դրան շատ յարաբերականօրէն պէտք է վերաբերուել: Միանշանակ է, որ խորհրդարանը ցրելու դէպքում ոչ միայն վերջնականապէս ընդդիմութիւնը կը կորցրնի քաղաքական «բեմահարթակը» (հանրահասարակ տարածքի յետոյ), այլեւ խորհրդարանական, առաւել եւս նախագահական ընտրութիւններում յաղթելու բոլոր խաղաթղթերը:

Յատկապէս վերջինիս առումով լուրջ խնդիրներ կարող է ունենալ քաղաքական մեծամասնութիւնը, ի դէմս հանրապետականների, որոնք խորհրդարանի ցրման դէպքում ժամկէտից շուտ կանգնելու են կառավարութիւնը կորցնելու վտանգի առջեւ, քանի որ այս երկու գործընթացները քաղաքական յարաբերութիւններում խիստ փոխկապակցուած են:

Իսկ դա նշանակում է ժամկէտից շուտ հրաժարում քաղաքական, վարչական այն թակններից, որոնք կարող են սահուն ապահովել հանրապետականների անցումը յաջորդ խորհրդարան ընդհանրապէս, իշխանութիւն՝ մասնաւորապէս: Առաւել եւս, որ չնայած արտաքուստ թուրքական մէկ թեւի տպաւորութեանը, հանրապետականներ-նախագահ յարաբերութիւնները բարեկարգակազմութիւնը պայմանաւորուած է զուտ այլընտրանքի րացակայութեամբ:

Ինչեւէ, երբեք կողմերի համար էլ խորհրդարանի ցրումը ամենալաւ լուծման ճանապարհը չէ, ուստի եւ այս տարբերակը ընդհանրապէս պէտք է բացառել: Մինչեւ ընտրութիւնների մեկնարկը, այսինքն՝ մինչեւ եկող Սեպտեմբեր, քաղաքական ուժերը նախընտրում են գործել ստեղծուող բարդութիւնները ստեղծելու մարտավարութեամբ: Ինչ կը լինի Սեպտեմբերին, դժուար է ասել: Բայց որ յատկապէս այդ ամսուան ընթացքում կը ծաւալուեն հիմնական իրադարձութիւնները, անհերքելի է, քանի որ դրանից չեն խուսափում իրադարձութեան 55օր յօդուածի 3րդ կէտը՝ «իր պաշտօնավարութեան 55օր յօդուածի 3րդ կէտը»:

Սկսուած պայքարը խթանել Ազգային ժողովը: Սկսուած պայքարը խթանելու է աւելի թեմանալ, թերեւս հակադիր գիրքերով ընտրութեան շարունակական կարծարացմամբ, ինչն արտաքուստ թուրքական երկխոսութիւնը երաւան էր անհրաժեշտ միջոց: Այդ ժամանակ շատ բան կու ճաբարներ թիջել: Այդ ժամանակ շատ բան կախուած կը լինի նրանից, որքանով կողմերը «անխոցելի» մարտավարութիւն կ'ընտրեն:

## Միսեւ ՆԱՐԱՆՆԵՐ - ՂԱՅԱՍԱՆ

# ԻՆՉ ՈՒՆՈՐՏՆԵՐՈՒՄ Է ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ՄԱՐԳԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ

2002 Ֆինանսական տարում Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութիւնը 103 միլիոն տոլարի օգնութիւն է յատկացրել Հայաստանին: Միացեալ Նահանգներու կառավարութեան բոլոր գերատեսչութիւնների կողմից օգնութեան ծրագրերի իրացմանն ուղղորդուած միջոցները բաշխուում են մօտաւորապէս հետեւեալ կերպ.՝ Ժողովրդավարութեան աջակցման ծրագրերին՝ յատկացուած է 27,8 միլիոն տոլար շուկայական բարենորոգումներին՝ 31,1 միլիոն տոլար, անվտանգութեան ամրապնդման ծրագրերին՝ 10,2 միլիոն տոլար, մարդասիրական օգնութեանը՝ 5,1 միլիոն տոլար, միջհատուածակիան նախաձեռնութիւններին՝ 28,8 միլիոն տոլար:

Ժողովրդավարութեան զարգացման բնագաւառի ծրագրերը ներառում են աջակցութիւն անկախ դատական մարմիններին, իշխանութեան տեղական մարմիններին աշխատակիցների ուսուցում, ինչպէս նաեւ օրէնսդիր մարմինների ամրապնդում: Օգնութեան շրջանակներում աջակցութիւն է տրամադրուում նաեւ անկախ գնադուածային լրատուամիջոցներին, ոչ կառավարական կազմակերպութիւններին եւ հանցանքից զարգացմանը:

Տնտեսական օգնութիւնը ներառում է փոքր եւ միջին պիզնեսի համար վարկերի մատչելիութեան ընդլայնում, գիւղատնտեսութեան զարգացման ծրագիր եւ աջակցութիւն զբօսաշրջութեան եւ տեղեկատուական արհեստագիտութիւնների հատուածներին՝ մասնաւոր հատուածի զարգացումն արագացնելու եւ Հայաստանի մրցունակութիւնը բարձրացնելու նպատակով: Միացեալ Նահանգների նախարարութեան խորհրդականները օգնում են բարելաւելու պետական եկամուտների հաւաքելիութիւնը եւ կրճատելու պիւստէի բացը:

Ճեթթագրիկ տարում անվտանգութեան բնագաւառում Հայաստանին յատկացուած օգնութիւնը գրեթէ կրկնապատկուել է՝ հասնելով 10 միլիոն տոլարի անցեալ տարուան 5,6 միլիոն տոլարի համեմատ: Այդ գումարը ներառում է 4,4 միլիոն տոլարի ռազմական օգնութիւնը, որն ուղղորդուած է Միացեալ Նահանգների եւ ՕԹԱՆի ուժերի հետ գործնական հաստեղծութեան բարձրացմանը: Իրաւապահ գործունեութեան ոլորտում Միացեալ Նահանգների աջակցութիւնը Հայաստանին օգնում է պայքարել թմրանիւթերի ապօրինի շրջանառութեան եւ ֆինանսական յանցագործութիւնների դէմ: Այն նպատա-

կաւղղուած է նաեւ մարդու իրաւունքներին առնչուող իրավիճակի բարելաւմանը:

Անվտանգութեան բնագաւառում Միացեալ Նահանգների կառավարութեան օգնութիւնը նպատակաուղղուած է արտահանման վերահսկողութեան հայկական համակարգերի եւ սահմանների պաշտպանութեան կատարելագործմանը՝ սարքաւորում մատակարարելու եւ Հայ մաքսաւորներին, սահմանապահներին ուսուցանելու ճանապարհով: Բացի այդ, օգնութիւնը նպատակաուղղուած է արհեստավար գիտնական ուժերի ստեղծմանն աջակցելուն, Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան հնարաւորութիւնների ընդլայնմանը մարտական կառավարման բնագաւառում, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգների եւ ՕԹԱՆի եւ այլ միջազգային ուժերի հետ գործնական համատեղելիութեան բարձրացմանը:

Հայաստանին մարդասիրական օգնութիւն տրամադրելու ծրագրերը ներառում են ապրանքների մատակարարումներ արտաքին գործոց նախարարութեան կողմից իրականացուող մարդասիրական փոխադրումների ծրագրի շրջանակներում: Առաւել կարիքաւոր անձանց, ընտանիքների եւ հաստատութիւնների շրջանում բաշխուող հիմնական ապրանքներն են դեղորայքը, բժշկական սարքեր, դպրոցական սարքաւորումը, հագուստն ու մթերքը: Սպասուած է, որ 2002 թուականի ֆինանսական տարում արտաքին գործոց նախարարութեան կ'առաքի աւելի քան 15 միլիոն տոլարի մարդասիրական ապրանքներ: Ի լրացումն դրա, Միացեալ Նահանգների գիւղատնտեսութեան նախարարութիւնը 3,6 միլիոն տոլար է յատկացրել պարենային օգնութեան համար:

Երկրաշարժի գոտու վերականգնման ծրագրերը ներառում է օգնութիւն բնակարանների վերականգնման գործին, ինչպէս նաեւ այլ տնտեսական եւ ընկերային ծրագրեր Գիւմրիում եւ յարակից շրջաններում: Այդ ծրագրերը թնյ են տուել զգալիօրէն բարելաւել կենակարանային պայմանները: Բացի այդ, Միացեալ Նահանգների կառավարութիւնն աջակցում է տուեալների եւ տեղեկատվութեան մշակման կենտրոնի ստեղծմանը, որն անհրաժեշտ է անապահով ընտանիքներին նպաստներ տրամադրելու ծրագրի արդարացի եւ արդիւնաւէտ իրացման համար:

«ԱՐՄԻՆՖՕ»

## ԼՈՒՐԵՐ ԱՐՅԱՆԵՆ

### ԳՊՐՈՑՆԵՐՈՒՆՈՐԳՈՒՄԸ 3ԱՌԱՋԻԿԱՅ 3 ՏԱՐԻՆԵՐՈՒՄ

Պատերազմական գործողութիւններուն պատճառով Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան մէջ ամբողջութեամբ աւերուած են տասնեակ մը դպրոցներ: Նախադպրոցական հիմնարկներ եւ գրադարաններ: Մեկնելով կրթութեան մարզի գոյութիւն ունեցող հարեւորակ ունեցող հատուածները, որոնք ամբողջութեամբ մշակած է Լեռնային Ղարաբաղի կրթութեան զարգացման 2001 - 2005 թուականներու պետական ծրագիրը, որուն ռազմավարական գլխաւոր ուղղութիւնը կրթական համակարգի զարգացումն է: Այս ծրագրի մէջ հինգ դպրոց պիտի վերանորոգէ թեհարանի հայոց թեմական խորհուրդը:

«Ազատ Արցախ» թերութիւն, տրուած հարցազրույցի մը մէջ «Սասուն» ընկերութեան գլխաւոր տնօրէն Յովհաննէս Աւետիսեան նշած է, որ Արցախի մէջ պիզնեսի համար ստեղծուած են բարենդպաստ եւ փոխհաճախէ պայմաններ: Ըստ Յ. Աւետիսեանի, կը ծրագրուի 2 - 3 տարուան ընթացքին բանալ նաեւ ռեստինէ խողովակներու եւ այլ իրերու արտադրամաս: Արտադրութիւնն ստացւելիք եկամուտները պիտի օգտագործուին նոր աշխատատեղերու ստեղծման նպատակով:

### ՊԵՋՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան մէջ իրանահայ խումբ մը գործարարներու կողմէ բացուած կատարուած է կերպընկալէ (փոլիթիկ) ինքնուձեռն խողովակներին մէջ մասնաւորապէս ինդիք դրուած է յառաջիկայ 3 տարիներուն ընթացքին ամբողջութեամբ նորոգել Արցախի դպրոցները: Իրաւական կատարել աւելի քան 67 միլիոն դրամի ներդրումներ:

«Ազատ Արցախ» թերութիւն, տրուած հարցազրույցի մը մէջ «Սասուն» ընկերութեան գլխաւոր տնօրէն Յովհաննէս Աւետիսեան նշած է, որ Արցախի մէջ պիզնեսի համար ստեղծուած են բարենդպաստ եւ փոխհաճախէ պայմաններ: Ըստ Յ. Աւետիսեանի, կը ծրագրուի 2 - 3 տարուան ընթացքին բանալ նաեւ ռեստինէ խողովակներու եւ այլ իրերու արտադրամաս: Արտադրութիւնն ստացւելիք եկամուտները պիտի օգտագործուին նոր աշխատատեղերու ստեղծման նպատակով:

